

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿԱԿԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«21» հունիսի 2013 թ.

գ. Ձորակապ

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ձորակապի համայնքում վարչական հսկողություն հրականացնելու մասին» թիվ 42 կարգադրության, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ Ռուբեն Հարությունյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Մարիետա Գյողակյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Արտյոմ Սարգսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի առաջատար մասնագետ Ձորիկ Խաչատրյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի առաջատար մասնագետ Սարգիս Մելոյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Ձորակապի գյուղական համայնքի ղեկավար Զարգանդ Սահակյանի, Ձորակապի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2013 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի հունիսի 3-ին և ավարտվել է 2013 թվականի հունիսի 14-ին:

Վարչական հսկողության արդյունքում պարզվել է հետևյալը՝

Ձորակապի համայնքի ղեկավարը համայնքում կատարված նախորդ վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2010 թվականի դեկտեմբերի 28-ի տեղեկանքը ներկայացրել է համայնքի ավագանու 2011 թվականի հունվարի 20-ի թիվ 1 հերթական նիստի քննարկմանը, մշակվել և գործողության մեջ է դրվել միջոցառումների ժամանակացույց և անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել տեղեկանքում արձանագրված համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացման գործում տեղ գտած թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ: Վարչական հսկողության արդյունքում «Տեղական ինքնակառավարման